

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուր, կես տարվանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը լաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար գնումում են
խրաքանչիւր րոպին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մեր երկաթուղիները—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,
Նամակ վաղարշապատից, Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ, «Մասկ» լրագրի յօդուած: Արեւ-
ելեկան-Բուսիլա: Ֆրանսիա: Նամակ թիւրքա-
յից:—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

ՄԵՐ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

Ընթերցողը կը կարգայ «Մշակի» ներկայ
համարում միջադպշին հեռագրական ընկե-
րութեան մի հեռագիր այն սարսափելի
անցքի մասին, որ պատահեց այս օրերս
Բոստօփ-Վլադիկավկասեան երկաթուղու վրա:
Նշանաւորն այն է, որ, ինչպէս հաւատաց-
նում են, այդ երկաթուղու հետ դժբաղ-
դութիւնները գրեթէ ամեն տարի պատա-
հում են, գրեթէ միշտ մի և նոյն տեղի
վրա:

Ճանապարհը Բոստօփից մինչև Վլադիկավ-
կաս հարթ ու հաւասար է, գնացքները
երբեք շատ մեծ տրագուծեմամբ չեն շարժ-
վում:—Ուրեմն այդ տեսակ դժբաղդութիւն-
ների պատահելը կարելի է վերաբերել մի-
միայն նոյն իսկ երկաթուղու վատ շինու-
թեանը և ծառայողների անհոգութեանը:
Միթէ ճշմարիտ մեր ինժեներների համար
մարդկային վեհաքննութիւնը քիչ չառաջա-
թիւն ունի, քան թէ իրանց անձնական
ներթական շահերը: Միթէ ճշմարիտ եր-
կաթուղու վազօնների մէջ նստելուց առաջ
մարդը պէտք է իր կտակն անի...:

Հեռագիրը հաղորդում է, որ ինն մարդ
սպանված են, տասն և չորս հոգի ծանր
կերպով վիրաւորված են, որոնցից երեք շա-
տերը դարձեալ կը մեռնեն, կամ ամբողջ
կեանքի համար այլանդակված կը մնան, և
բազմաթիւ մարդիկ թեթեւ կերպով վիրա-
ւորված են: Եւ այդ տեսակ անցքեր պա-
տահում են ամեն տարի:

Առհասարակ Բոստօփի երկաթուղին վա-
ղուց է որ յայտնի է իր մեծ անկարգու-
թիւններով: Դժբաղդութիւններ, զոդու-
թիւններ,—ամեն բան պատահում է այդ
գծի վրա: Ամեն տարի գրեթէ նոյն տեղի
վրա դժբաղդութիւն է պատահում, ամբողջ
վազօնները վերվում են, բազմաթիւ մարդիկ
սպանվում են վիրաւորվում են,—իսկ գծի
վարչութիւնը դժբաղդութեան նոյն իսկ հե-
տեալ օրը մի կերպ, ինչպէս ասում են,
ձախ ձեռքով, պնդացնում է թշնմանը,—և
ահա երթեկեկութիւնը նորից սկսվում է:

Երբ, վերջապէս կազատվինք մենք շահա-
սէր, իրանց անձնական շահերի համար
ուրիշի կեանքը գոհող ինժեներներից ու
պաշտօնեաներից, երբ վերջապէս կը սան-
ձահարմիր անհոգութիւնը, ետականութիւնը,
երբ վերջ կը գրվի գործ կատարող մեքենա-
պետների ու ծառաների հարեցութեանը,
որոնց ձեռքին է յանձնվում հարեւարաւոր
քաղաքացիների կեանքը:

Մեր կարծիքով, հարկաւոր կը լինէր
մտցնել և մեզ մօտ երկաթուղու վրա ճա-
նապարհորդների կեանքի ապահովութիւնը:
Մի չնչին արեւմտ վճարելով նոյն իսկ տու-
սակ առնելու ժամանակ, ճանապարհորդը

ապահովում է իր կեանքը ճանապարհի
դժբաղդ պատահարների դէմ՝ քան, ե-
րեսուն, քառասուն հազարով: Դա կը լինէր
մի միջոց որ կը ստիպէր գծի վարչու-
թեանը աւելի ուշադիր, աւելի զգոյշ, ա-
ւելի ճիշդ լինել, քանի որ նա աչքի առաջ
կունենայ թէ դժբաղդ անցքից յետոյ նա
ամեն անգամ ստիպված կը լինի հարկւ-
ր հազարներ վճարել վնասվածների ընտանիք-
ներին:

Ներթական հաշիւը միակ միջոց է որ
կարող է սանձահարել շահասէրների կամա-
յականութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Յունիսի 19-ին

Հասած լինելով վաղարշապատ ևս այցելեցի
և Նվմիածին վանքը: Բաւական անհոգ դրութեան
մէջ է վանքը ամեն կողմից: Ներսէսից շինած
լիճը, եթէ այն դրութեան մէջ մնայ, ինչպէս նը-
բան այժմ պահում են, մի տաս տարուց յետոյ
կատարելապէս կանչեալանայ: Քարեր ասէք, փա-
լաս ասէք—ամեն բան գցում են լճի մէջ: Եւ
տակը լցվել է կեղտով, ջուրը հոսում է: Լճի
մէջ եղած ձկները ով ուղում է վերցնում է:
Ներսէսի հինգերորդին է պարտական, հետզհետէ կորչում
է. ծառերը անորոշ կերպով կտրատում, կըտ-
րում, ոչնչացնում են:

Մտայ սեղանատունը. ինձ վրա շատ անախորժ
տպաւորութիւն ունեցաւ վանքի ծառաների, շա-
թիւնների, տիրացուների վարմունքը վարդապետ-
ների և մինչև անգամ մի քանի եպիսկոպոսների
հետ: Չը նայելով օտար մարդու ներկայութեան
այդ բոլոր ստորագրեալները ամենակապիտ և ան-
վայել կերպով խօսում և վարվում էին վարդա-
պետների և մի քանի եպիսկոպոսների հետ: Եւ
կը կարծէր որ նրանք են մեծաւորները, իսկ
վարդապետները նրանց ստորագրեալներն են: Եւ
հետաքրքրվեցայ իմանալ թէ ինչ է պատճառը
որ տիրացուներն ու ծառաները այդքան երես-
էին առել. ինձ պատասխանեցին. «չենք համար-
ձակվում նրանց մի բան պատասխանելու, ամեն
բան համարում ենք, որովհետեւ գիտենք թէ
մեր ամեն մի խօսքը Մանկունուն կը յայտնեն,
այդ տիրացուներն ու ծառաները բոլորն էլ Ման-
կունու լրտեսներն են և մեզ շատ հեշտութեամբ
կարող են վնասել»:

Այնուհետև ևս մտայ տպարան, Նվմիածնում
հրատարակված մի քանի գրքեր առնելու համար:
Գրքերն առայ, փողը վճարեցի մի վարդապետին,
որ երեկ գրադարանապետ է, բայց փողը ստա-
նալով ինձանից, նա ոչ ստացական տուեց ինձ,
ոչ էլ մատենան մէջ նշանակեց: Ինչպէս երևում
է այդ բոլոր գրքերը անկօնորոշ են ծախվում և
փողը մտնում է նոյն իսկ գրադարանապետի
զրկանքը:

Մի ութ օր մնալով վաղարշապատում իմ մաս-
նաւոր գործերով, ևս առիթ ունեցայ ծանօթա-
նալ մի սղոյանցի հայ երիտասարդի հետ, որ
եկած էր այստեղ խնդրելու որ իրան թոյլ տան
պսակվել մի հայ օրիորդի հետ, որի հետ ամուս-
նանալը Նվմիածինը չէ թոյլ տալու երիտասար-
դին, ասելով որ օրիորդը հեռու աղակաւն է և
մուսնացող երիտասարդի Պսակը, ուրեմն չը հաս-
է համարված: Երիտասարդին խորհուրդ տուեցին
անձամբ դիմել իրան Մանկունուն, բայց սա չըն-
դունեց երիտասարդին: Այն ժամանակ նրան խոր-
հուրդ տուեցին գրել Մանկունուն մի խնդրք,
և ծրարի մէջ գնել մի 100 րուբլ: Այդպէս էլ ա-

րաւ խեղճը, բայց մերժում ստացաւ քիչ օրից
յետոյ, թէ 100 րուբլ էլ երբեք յետ չը ստա-
ցաւ: Վերջը մենք խնայանք որ մերժման պատ-
ճառը փողի քուլիւնն էր. չըհաս պատկեր
հասցնելու համար Նվմիածին մաղան դաւ 2000
րուբլ է եղել: Բայց այդքան փող երիտասարդը
չունէր, աղքատ մարդ լինելով:

Յուսահատված նա վերադարձաւ Սջնախ:
Մի օր պտտելով անտառի շուրջը ևս հանդի-
պեցայ մի խումբ հայ գիւղացիների, որոնց խո-
նար, հլու դէմքերից ևս եզրակացրի որ խնդրա-
տուններ պէտք է լինէին: Նրանց գէմբի կօպիտ
արտայայտութիւնը, նրանց գրեթէ զջրած, պա-
տառոտած, կեղտոտ գիւղական հագուստը վկա-
յում էին թէ տգէտ, չքաւոր գիւղացիներ էին:
Եւ հետաքրքրվեցայ և մտնեցայ նրանց խմբի
ու փորձերից ինչ իմացայ. որքան դարմացայ ևս
տեղեկանալով, որ այդ հինգ վեց հոգուց բաղկա-
ցած գիւղացիների խումբի գիտաւորութիւնն էր
քա հանայ ձեռնադրվելու... Նրանցից իւրա-
քանչիւրը մի չորս, հինգ հարկւր րուբլ էին բե-
րել իրանց հետ և պէտք է գիւղական քահանայ
ձեռնադրվէին: Կարող էք երևակայել ինչ քա-
հանաներ կը լինեն սրանք. կօպիտ, անտաշ, ա-
նուտ, անգրագէտ... Չորս, հինգ հարկւր մանե-
թի չորսով Մանկունին նրանց քահանայ կը
ձեռնադրէ և անա նրանք կը դառնան ժողովր-
դական դատարարներ, ժողովրդին բարոյա-
կանութիւն և Աստուծու խօսքը քարոզողներ...
Ինչպէս չըհաս պատկեր հասցնելու համար
Նվմիածին մաղան դաւ 2,000 րուբլ է, այն-
պէս էլ քահանայ ձեռնադրելու մաղան դաւ
500 րուբլ է:

Հաստատա արդեւրից ինձ հաղորդեցին որ ան-
ցեալ 1880 թիւ ընթացքում Մանկունին ձեռ-
նադրեց այդպիսով 150 քահանայ: Եթէ իւրա-
քանչիւր ձեռնադրութիւնը 500 րուբլով հաշուենք,
անա ձեռնադրեալներն 75,000 րուբլ պատկաւելի
գումարը, որ ամենաբարձր ստանում է Մանկու-
նին Միմիայն քահանայ ձեռնադրելու գործից:
Այժմ հասկանալի է թէ ինչի վանքը աշխատում
է ամեն տեղից վերցնել թեմական առաջնորդ-
ներին. սրանք իրաւունք ունենին քահանայ
ձեռնադրելու, բայց այժմ, որովհետեւ քահանա-
ներ այլ ևս գաւառներում չեն ձեռնադրվում,
բոլոր ցանկացողները գալիս են Նվմիածին և
փողերը, որոնք պէտք է բաժանվէին առաջնորդ-
ների մէջ, ամբողջութեամբ մտնում են, որպէս
նոր և հաստատա արդեւրեւնի արդիւնք, Մանկու-
նու լայնածաւալ գրպանը:

Եւ մեկնելու եմ Նվմիածնից բաւական տիտուր
յիշողութիւններ տանելով ինձ հետ հայոց ազգի
այդ սրբաւայրի մասին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մօսկվա, Յունիս

Ուղարկելով ձեզ նուիրատուութեան ցուցակի
հետ 134 ր. 30 կ., որ նուիրել են Մօսկվայի
հայ ուսանողները յօդուած վանայ սովետոյ—
խնդրում մեծապէս հաջողեք այդ գումարը ուր
հարկն է և նուիրատուութեան ցուցակը տեղաւո-
րէք ձեր պատուական թերթի մէջ: Ահա այդ
ցուցակը: Իւրաքանչիւրը 10 րուբլ—բժ. Զար-
գարեանց, Գր. Խ., Ս. Մամիկոնեան, Մ. Միր-
զդեան. Գ. Միրզոյեան, Յ. Տէր-Զաքարեանց.
Իւրաքանչիւրը 5 րուբլ.— Ի. Բէկ-Յովսէփ, Խ.
Բահաթրեանց, Գ. Տէր-Պետրոսեանց, բժ. Կօն-
դուրաւեանց, Ա. Ղուկասեանց, Ա. Ֆիլանդրեանց,
Թայիրեանց. Իւրաքանչիւրը 3 րուբլ.—Խաչատ-
րեանց, Բ. Սարգսեանց, Գր. Կոնստանց, Իւրա-
քանչիւրը 2 րուբլ.—Ունի, Թանգոյեանց, Ա.
Խան—Աղեանց, Է. Նիկողայեանց, Աղ. Քա-
լանթար, Տէր-Յակովբեանց. Իւրաքանչիւրը 1
րուբլ.—Գաղեանց, Լիսիեանց, Ստեփանեանց,

Դէյվարեանեանց, Գարուծեանց, Ա. Քա-
լանթարեանց, Ամիրխանեանց, Ս. Գովհանի-
սեանց, Շահիկեանց, Ս. Տօնեանց.—Ընդամենը—
135 րուբլ: փօստի ծախս—70 կ. մնում է հա-
րիւր երեսունը չորս րուբլ.— 30 կպ.:

Գր. Խաչատրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մաղկաձոր, 22 յունիս

Ձեր լրագրի 105 համարում տպված բժիշկ
Տիգրանեանցի, Երեւանից գրած նամակի ներթի-
մասին, թոյլ տուէք մի քանի խօսք ասել:
Դռները վրա կայցնող թղթերի պատճառաւ,
լօտս խաղացող տիկիւնները մի անտեղի դրապա-
տութիւն բարձեցին իմ վրա, իբր թէ ես եմ
խմբագրողը: Երես առ երես և ագնիւ խօսքով
աշխատեցի հաւատացնել մի երկու տիկիւններին,
այդ, այնպէս առած, լօտս խաղացող խմբի գլխա-
ւոր անդամներից փոքր ի չափ հակացողնե-
րին, թէ ես եմ և մինչև անգամ չը գիտեմ թէ
ո՞րքեք են այդ թղթերի կայցողները, բայց ո-
չինչ չօգնեց, չուզեցին հաւատալ և շարունակե-
ցին այստեղ այնտեղ ասել, թէ չես է, նրա
գործն է և այդպիսով զրկեցին ինձ մի երեւելի
հարսանիքից, (Ужасно...) և ստիպեցին զիմեւ
տպած խօսքի: Գարգելի տիկիւններ, ես տեղեկու-
թիւն չունեմ այդ թղթերից, նոյնը կարող եմ
ասել և իմ ընկեր Տ. Ն. մասին, դարձեալ չէք
հաւատում, ձեք կամքն է:

Մի քանի խօսք էլ պ. Տիգրանեանցին:
Խօսքներն մի չեղած բան, ասելով որ սոր
Երեւանի կիները ձգտում են մտաւոր կեանք վա-
րել և այդ մտաւոր կեանքը եղբարեակը լօտսի
խաղի մէջ, դա խղճի դէմ է, պ. բժիշկ:
Մի քանի խօսք կատեն երեւանցի կնոջ մտա-
ւոր դարգացման մասին, և դուք չը գուրաք թէ
կիրք է դուր գրել իր խօսքերի մէջ, որովհետեւ
կնոջ դէմ կիրք գործածելը ամենաանարարիկ
ցածութիւն է: Ասէք ինչդրեմ, ինչ մտաւոր զար-
գացում կարող է լինել մի չըմանում, ինչտեղ
չէք գտնի մի կին, որ միջակ գրագէտ լինի իր
մայրենի լեզուում (ռուսերէնի կողմից մի հարցնէք
անգամ):

Էլ ինչպէս էք մեղադրում երիտասարդու-
թեանը՝ թէ նա չէ գրադեցնում կանանց խելքը
ու միտքը, չէ կազմում երեկոյններ, չէ կարող
դասախօսութիւններ: Միթէ դուք համոզված
էք թէ ձեր դասախօսութեանը ներկայ եղող մի
քանի կիները, այն պարզ դասախօսութիւնից
մի փոքր բան աւելացրին իրանց մտաւոր պա-
հետի վրա, ոչ, սաստիկ սխալվում էք. ներկայ
եղողները ձեք համար էին, որովհետեւ նորութիւն
էր նրանց համար դասախօսութիւնը, իսկ ձեք
գոված, մտաւոր կեանք սիրող տիկիւնները հան-
դարտ նստած լօտս էին խաղում, լաւ իմանալով,
որ այն երեկոյ դուք դասախօսութիւն ունէք:

Երեկ դուք այս մի երեկոյն էլ կը վերաբերէք
նրանց մտաւոր դարգացմանը, երբ խաղի ժա-
մանակ մի օտար տիկին նկատում է թէ ինչո՞ւ,
փոխանակ ասելու барабанный парочка, шесть,
четыре, пять, туда сюда և այլն, չէք ասում
մի և նոյնը ձեք մայրենի լեզուով, մի քանիսնե-
րը նկատում են, թէ հայերէն չէ սաղում...
Ահա ձեզ մտաւոր կեանքի ետեղ վազող կի-
ները:

Ի դուր էք ասում, թէ փակված կինը խօ-
սում է իր գրացու հետ պատի վրայով, անչայտ
է թէ ինչի վրա (գրապատութիւն թէ սիրոյ հա-
բուրներ): Այո, պ. բժիշկ, դրապատութիւն
է ձեք կողմից այդպէս գրելը, որովհետեւ և մի օրի-
նակ անգամ չէք կարող ցոյց տալ, որ հայ կինը
խօսէ իր դրացի տղամարդի հետ, այն էլ պատի
վրայով:

Լօտս խաղալը, խելքի գործողութիւն և ժա-
մանակի պահանջմունքների հոսանք էք համա-

բում չը գիտեմ, միայն կարծեմ ծայրայեղութեան էջ դիմում:

Հերքելու կարօտ կէտեր չստ կան ձեր նամակի մէջ, միայն չարժեն:

Թովմաս Մահերեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել որ վարչութեան մէջ ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ բաց է ստորագրութիւն յօգուտ Թիֆլիսում հիմնելի որբանոցի, կայսր Ալեքսանդր II-ի անուանով:

ՇԱՄԱՐՈՒՑ Կ. Իմաստուն Գրքերու շաղկապից ստացանք 8 բուրլ հետեւեալ նամակով: «Ես և իմ տունս ուրախութեամբ պարտաւորվել էինք հինգ ամիս շարունակ ամսական ութ բուրլ գումար մեր թիւրքաբանակ հայ սովատանջ եղբայր: Չորս ամսվայ համար ուղարկել եմ, այժմ ուղարկում եմ մնացեալ 8 բուրլ և խնդրեմ բարեհաճել իր պատկանեալ տեղը հասցնել:»

Ստացանք ՄՈՁԳՕԿԻՑ 20 ր. 8 կ. յօգուտ վանի կողմերին պատահած երկրաշարժից փաստականութիւն, որ մի երեկոյթում ժողովեցին իրանց մէջ հաւաքված երիտասարդ ուսանողները: Այդ փողը մեզ ուղարկեց Գ. քահանայ Տուրքապեան:

ՄՈՁԳՕԿԻՑ մեզ հաղորդում են որ յօգուտ Հայաստանի երկրաշարժից փաստականութիւն Կ. Ս. Աւանեան գիտաւորութիւն ունի շուտով մի կօնցէրտ տալ: Յանկանում ենք երիտասարդին կատարեալ աջողութիւն:

ԱՍՏԻՍԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ յունիսի 15-ին հայ սիրողները քաղաքային ամառային թատրոնում մի ներկայացում տուին բարեկարգ ծական նպատակով: Թատրոնը լի էր և ներկայացումը, ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը, աջող է եղել:

ԹԻՖԼԻՍԻ հեռագրատան բաժնիք յունիսի 15-րդ արդէն բացվել է, Կիւրցովայ փողոցի վրա, Արծրառու գաղթեցում: Մուտքը շտաբի կողմից է: Թեւ շատ քիչ է կայքած պղտկից մինչև զլխաւոր հեռագրատունը, այնպէս որ հեռագիրներն ուղղակի այդտեղ են ընդունվում և ուղարկվում:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Ստացվեցաւ այստեղ մօտ օրերումս 70 օրինակ «Հրապարակախօս ձայն» գրքից: Այս գիրքը անգնա հատելի է գնահատողների համար, բայց շատերը հփուտարանում են հատուցանել 2 բուրլ և ունենալ մի օրինակ այս գրքից: Խորհուրդ ենք տալիս այստեղի Չէրքէզեաններին գնել մի մի հատ Դահլիզի գրքից և կարգաւ, գուցէ Չէրքէզեանի և նրա նմանների մէջ կը տեսնեն իրանց տղան:»

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ «Յունիսի 16-ին, Արդուլեան օրիորդաց դպրոցում աշխարհագրութեան հարցաքննութեան ժամանակ մի վարժապետ, որի անունը ամենքը գիտեն, բայց օրին ես արհամարհում եմ անունները, խայտառակ կերպով վարկեց տեսչի հետ հրապարակապէս: Տեսչի պատիւը վիրաւորված է, վիրաւորված է զգալի կերպով և ուսումնարանի պատիւը: Կը սպասենք թէ ինչ անօրէնութիւն կառնէ այս մասին ուսումնարանի հոգաբարձութիւնը: Այսպէս է միշտ մեր հասարակութիւնը: Մինչև որ չը փորձեն նստել նրա գլխին, նա չի իմանայ թէ ինչ տեսակ խարդախ մարդկանց հետ դործ ունի:»

Մի պարոն խնդրում է մեզ տպել հետեւեալ նկատողութիւնը: «Մի քանի ամիս ստանից առաջ «Մշակ» համարներից մէկում ուրախութեամբ կարդացինք Կ. Աղասի Մելիք-Այվազեանի մի նամակ, որով պարոնը յայտարարում էր թէ բաց է անում Հաւաքարում մի ընթերցարան: Ուրախութեամբ ամեն օր սպասում էինք որ ահա այսօր կամ վաղը կը բացվի ընթերցարանը, բայց դժբաղդաբար անցան ամիսներ և ընթերցարանի յիշատակը փոքր առ փոքր ան-յայտացաւ: Յանկալի կը լինէր, որ պարոնը օգուտ քաղէր իր ձեռք բերած իրաւունքից և

բազմաթիւ ստորագրողներին, որոնց թիւը, ինչպէս ասում են 200-ի է հասնում, և բանար ընթերցարանը:

Մենք իմացանք որ Նէրսիսեան դպրոցի տն-տուչ Արշակ Նահապետեան և նրա օգնական Ամիրան Մանգինեան կանչվեցան յանկարծակի կերպով Էջմիածին: Ասում են որ յունիսի 26-ին երկուսն էլ ուղևորվեցին դէպի Էջմիածին:

Մի ծիծաղելի լուր: Այն օրից երբ երեցաւ երկնքի վրա գիսաւոր աստղը, Թիֆլիսի ժողովուրդը այլ և այլ յիմար մարգարէութիւններ սկսեց անել: Մի մարդ բաց է անում Էֆիմէր-դին և գտնում է նրա մէջ այն գուշակութիւնը որ իբր թէ չուտով ջրհեղեղ կը լինի: Այդ լսելով նրա ծանօթը, որ շինութիւն ունէր, վճռում է դադարեցնել շինութիւնը ասելով. «Հաճախ եմ ջրհեղեղ կը լինի, այլ ես ինչիս է հարկաւոր շինութիւնս:»

ՄՈՁԳՕԿԻՑ մեզ գրում են: «Բաղաքիս հայ օրիորդական դպրոցում, ուր տիկին Տէր-Ղևոնդեանից յետոյ ձեռագործութիւնը և կարը մասամբ ընկած էին, այժմ նորից վերականգնած են, ներկայ վարժուհու, օրիորդ Մանուսեանի անխնայ աշխատութեամբ: Մօզգօկի օրիորդական դպրոցի և նրան կից թատրոնական դահլիճի հոյակապ շինութիւնները արագ կերպով առաջ են գնում նրա հիմնադիր Կ. Գանջումեանի անգուշ հոգացողութեամբ:»

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ 27-ին յունիսի օրիորդ Աստղիկ ուղևորվել է դէպի Կ. Պօլիս, Թօթի-Թիֆլիսեան երկաթուղով: Երկաթուղու կայարանում հաւաքվել են օրիորդին ճանապարհ գցելու համար նրա պաշտողներն ու բարեկամները: Վազօնը, որի մէջ նստեց օրիորդը, լցվեցաւ ծաղիկներով: Նոյն օրակին ներկայացրին օրիորդին «Մշակ» վերջին համարը որի մէջ տպված էր Թատրոնային ստորագրութեամբ յօդուածը: Աստղիկ «Մշակ» համարը և Սուրբուհիեանի պատկերը ձեռին, չըջապատված փունջերով, մեկնեցաւ Թիֆլիսից:

«Кавказский Курьеръ» լրագիրը համակրութեամբ արտասպէս իր վերջին համարներէջ մի-նում «Մշակ» առաջնորդող յօդուածը «Կովկասեան համարարանի» մասին:

Մեզ գրում են Ալեքսանդրապօլից որ մտադրութիւն կայ առաջիկայ սեպտեմբերին բանալ III-որդ դաստառն Արդուլեան օրիորդական դպրոցում, որ այժմ ընդկայացած է երեք պատ-րաստական և I և II դաստաներից:

Շնորհակալութեամբ ստացանք չորս հատ հա-յերէն գրքից: Կրօնական բովանդակութեան, որոնցից երկուսը «Հառ միութարութեան» և «Աղօթք անձում» են: Երկուսն էլ 1874 թվական, իսկ երկուսը «Բարի լուր» և «Աւետիք» տպված են Թիֆլիսում 1880 և 1881 թվին, Բ. Մարտիրոսեանի տպարա-նում: Այդ բոլոր գրքիցներն էլ թարգմանու-թիւններ են երևում: Մինը «Հառ միութարութեան» թարգմանել է Ա. Վարդանեանը: Միւս-ների թարգմանիչները անունները անգայտ են մեզ, միայն մինի տակ, այն է «Բարի լուր» բրոշուրի տակ յիշված է որ դա թարգմանված է ռուսերէն «Благая Весть» գրքիցից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

«ՄԱՍԻՍ» ԼՐԱԳԻՐ ԹՕԳՈՒԱՏ

Հետեւեալ հատուածներն երեանէն զը-րուած նոր նամակ մը քաղուած են:

«Տեսնելով աշխարհիս փորձերը, թերա-հաւատ մարդն անգամ սկսում է ակամայից հաւատալ թէ չը կայ ոչինչ որ թաղչի-այո՛, հազար անգամ սուրբ են Յիսուսի խօսքերը... Ինչպէս սանցի վերը, Պետեր-բուրգի երկու յայտնի անձինք, ծածկվե-լով այսչափ տարի «ազգասէր» վերաբերուով, վերջապէս մերկայան և ի՞նչպէս—որ և իցէ մի հատ նամակից, որը տպված էր

Մասիսի մէջ, իսկ յետոյ արտատպած Մշակից: Այդ օրհասական նամակը կատարեց այն, ինչ որ չը կարողացաւ վրձ-նել տասնեակ տարիներ ամբողջ հայ լրա-գրութիւնը. նա կարողացաւ սթափեցնել համայն հայ հասարակութիւնը և դարձ-նել նորա ուշադրութիւնը այն մարդերի վրա, որոնց ձեռքին էր ազգի տուրքը, Էջ-միածնի չորս հարիւր հազար բուրլը: Էջմիածնի գլխաւոր պրօկուրօրը ստիպված գտնվեցաւ բողոքել Կաթուղիկոսի բերանից, բայց ո՛րչափ անցաւ, խօսելով աթոռի փողերի մասին, նա ոչինչ չսանց այդ ա-թոռը 1867-ից յետոյ մտած գումարի մա-սին, այլ խօսեց միայն առան ու երկու տա-րի առաջ տեսած հաշիւների համար, մինչ-դեռ յայտնի է, որ այդ հաշիւները վերա-բերվում են գրեթէ Մատթէոս Կաթուղի-կոսի ժամանակին, ուրեմն Էջմիածնի ընդ-հանուր պրօկուրօրը ձգտելով Մասիսի երեան հանած սոսկալի զեղծումը գոցել, Էջմիածնի գործը աւելի փչացրեց: Ի՞նչ ա-րած երբ ոչինչ բան չէ անցնում աշխար-հում անպատիժ... Այսպիսով Մասիսի նետած կայծից սկսեց զոյանալ մի հրդեհ, որը մարելու համար ոչինչ միջոց չէ կար-դանում գտնել Էջմիածնից. այս քանի օրերս անցաւ Մօսկվայից Պետերբուրգ Կաթուղի-կոսի յատուկ պատուիրակ Աղափիրեան և պիսկոպոսը. հասարակաց ձայնը հաստա-տում է միահամուռ, որ նա ունէր իր մօտ Կաթուղիկոսի սեփական նամակը, որով նա աղաչում է Պետերբուրգի երկու ազգա-սէրներին խղճալ իր վրա և ազատել պատասխանատուութիւնից ազգի առաջ, բայց երբ ազգասէր անունը եղել է մի-այն մի պատրուակ չորս հարիւր հա-զար բուրլ գումար իրանց ճիրանները զցե-լում: Եւ արեւելք շուտով, եւ չէին կա-թուղիկոսական օրհնանքով կամ անէծքով այդ գումար յետ կորզել: Հարկաւոր չէ ա-ռանձին հեռատեսութիւն ունենալ այս թշուառ բանակցութեան արդիւնքը գու-շակելու համար...»

«Բայց մի բան, որ ամենից աւելին է զար-մանալի այս տխուր պատմութեան մէջ, այդ մեր ազգային մամուլի կուրու թիւնն է. և յիշուի, զիցուք թէ Մասիսը մասնա-ցոյց չը լինէր այս սոսկալի ազգային զեղծ-ման համար, միթէ՞ ոչ ոք ուրիշը չը պի-տի իմանար այս և շարունակէր գովաբանել նոցա, որոնք վամպիրի դեր կատարելով պիտի փառաբանվէին ամբողջ ազգից ազ-գասէրի պայծառ անուններով... Էլ ի՞նչ խրախոյս և ի՞նչ բառ հարկաւոր էր գոր-ծածել ի սկսկան ազգասէրների համար, երբ ազգի վերջի լուսնան գրաւորները պիտի հայրենա սիրութեամբ փայլէին, երբ Նալբանդեանցները, Նազարեանցները և Միանասարեանցները մատնութեան գոհնը լի-նելով իջան գերեզման, ազգի կողմից մի համակրութիւն չը գտնելով, միթէ՞ անի-րաւութիւն չէ, որ այդ նահատակների մատնողները ամեն տեղ յարգվեն, ամենի առաջ պատիւ փայլեն... Ո՛չ, այսպիսի բան երկար ժամանակ չէր կարող անպա-տիժ մնալ և հա՛ն կարծես Աստուծու վը-րէժնադրութիւնը Մասիսի իր համար խարազան ընտրեց այդ մարդիկը պատժե-լու համար: Ամեն ազգիւ հայ, իմ կարծի-քով, պիտի դատաւոր կանգնի այս գործի մէջ և ուշի ուշով հետամուտ լինի Մա-սիսի յայտնած զեղծման ընթացքին, ո-րից հետ պարտ է իր հանդիսաւոր շնոր-հակալքը յայտնել այդ լրագրին, որի շնոր-հիւ միւս անգամ չի կրի ազգը այսչափ ծանր նիւթական և բարոյական գոհնը:

ուրեմն սպասենք Աղափիրեանցի բանակ-ցութեան վերջաւորութեան, և տեսնենք թէ երկու «յայտնի ազգասէրներ» նոյն-չափ պիտի անխնայ վարվէ՞ն ազգիս չորս հարիւր հազար բուրլու հետ, որչափ Նալբանդեանցի կեանքի հետ, թէ պիտի սարսին վերջապէս ազգի զայրոյթից:»

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԲՈՒՄԵԼԻԱ

Վերջին անցքերը բոլորական իշխանու-թեան մէջ մեծ տպաւորութիւն գործեցին Ֆիլիպօպօլի ազգաբնակչութեան վրա և վը-տացրին բոլոր ազգասէրներին: Մայիսի 31-ին մի մեծ ժողով կայացաւ րէ-պական ուսումնարանի շինութեան մէջ: Այդ ժողովին մօտ 2,000 մարդիկ մասնակ-ցեցին, իսկ այդ թիւը Ֆիլիպօպօլի համար չափազանց մեծ է: Ժողովի նախագահը խելացի կերպով կատարում էր իր պարտա-կանութիւնները: Մի քանի ծառայողներ յարձակեցին իշխան Ալեքսանդրի հակա-սահմանադրական քաղաքականութեան վրա: Ժողովի վերջնայու ժամանակ կարգադրե-ցաւ խօրվատական ուսանողների ազգաբա-րութիւնը բոլորական ժողովրդին, որ ընդունվեցաւ միաբան ծափահարութիւն-ներով: Ժողովը հետեւեալ վճիռը կայացրեց. «Ֆիլիպօպօլի բնակիչները, հաւաքվելով հիւսիսային Բոլորական գործերի կրիսի-ական դրութիւնը քննելու համար, վճռե-ցին՝ բարձրաձայն դատաւարտել Բոլորական մէջ կատարվող հակասահմանադրական գոր-ծողութիւնները, ցոյց տալ մեր եղբայրնե-րին այն անդունդը, որ պատրաստում է նրանց համար բոլորական կառավարութիւնը, ցոյց տալ նրանց սրբազան պարտականու-թիւնը սահմանադրութիւնը պաշտպանելու համար, որ ապահովում է նրանց ազատու-թիւնը և միակ գրաւական է բոլորական ժողովրդի ապագայ զարգացման և բարօ-րութեան համար:»

Ժողովին ներկայ գտնվող օտարականները և ռուսները զարմացել էին բոլորացրեն-րի զուգուրութիւնից և սառնասրտութենից: Ասում են, որ այդպիսի ժողովներ կը կայա-նան Արեւելեան-Բոսնիայի այլ քաղաքնե-րում:

Տեղական մամուլը, որ առաջ զգուշու-թեամբ վերաբերվեցաւ Մօֆիայի մէջ կա-տարված յեղափոխութեանը, այժմ սկսել է սաստիկ յարձակվել իշխանութեան մէջ կատարվող վերջին կարգադրութիւնների վրա: Մանաւանդ նա զայրացած է զինուո-րական դատարանների հիմնելու և մամուլի ազատութիւնը սահմանափակելու դէմ: Մա-նաւանդ սատիկ պախարակում է իշխան Ալեքսանդրի բռնած ընթացքը «Народ-ный Гласъ» լրագիրը, որ աշխատում է արտայայտել ժողովրդի կարծիքներն ու յանկութիւնները:

ՅԲԱՆՍԻԱ

Վերջին երկու շաբաթների ընթացքում օրից օր սպասվում էր Կիւֆօրի մահուան լուրը: Կիւֆօրը իրաւացի կերպով համար-վում էր երեւելի փաստաբան և պետական գործիչ: Նա չափազանց ազնիւ և խիստ բնաւորութեան տէր մարդ էր: Կիւֆօր մի ժամանակ Թիւրք գործակիցն էր և հակա-ռակորդը քաղաքական ասպարէզի վրա: Վերջին տարիների ընթացքում Կիւֆօր հե-ռու էր կենում քաղաքական գործունէու-թենից և իր վերջին օրերը անց էր կաց-նում գիւղում: Կիւֆօր ծնվեցաւ 1798 թուականին և մասնակցեց վերջին դարի

նշանաւոր շարժումներն և անցքերն ճիւղանալի մէջ: Նա վախճանվեցաւ իր կալուածքի մէջ, մինչև վերջին րոպէն պահպանելով իր մտաւորական ոյժերը: Նա համոզմամբ հանրապետական էր, բայց ընդդէմ չէր սահմանադրական և ազատամիտ միապետութեանը: Հանգուցեալը եռանգոտ կաթօլիկ էր և վախճանում էր արմատական ներքից: Նա թիւերի նման «հանրապետութիւն» էր ցանկանում, բայց առանց հանրապետականների: Գիւֆոր վախճանվեցաւ մոռացված իր ժամանակակիցներից, բայց այնպիսի անուն թողեց, որ յարգված է բոլոր կուսակցութիւններից:

Ֆրանսիական Ֆինանսների մինիստրը սուփրութիւն ունի իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ հաշիւ հրատարակել ստացված հարկերի մասին: Յունիսի առաջին կէսի համար հրատարակված հաշիւը չէր կարող չուրախացնել ֆրանսիացիներին, ուրովհետեւ այդ ժամանակամիջոցի ընթացքում 15,000,000 ֆրանկ աւելորդ հարկ է ստացված, քան թէ կառավարութիւնը ըստ պատւի էր, այնպէս որ իւրաքանչիւր օր մի միլիոն աւելորդ հարկ է ստացված: Մենք ի հարկէ չենք կարծում, որ այդպիսի աւելորդ կը ստացվի իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ, նկատում է այդ առիթով «Temps» լրագիրը, բայց այնուամենայնիւ 5 1/2 ամիսների ընթացքում իւրաքանչիւր օր աւելորդ հարկ է ստացված գոնեաւ կէս միլիոնից աւելի: Այդ աւելորդը լինում է կէս միլիոնից մինչև մէկ միլիոն, այնպէս որ տարվայ ընթացքում կարելի է 182 մինչև 365 միլիոն ֆրանկ աւելորդ հարկ ստանալ: Այսպիսի գեղեցիկ հետեանքից հանրապետութիւնը կարող է կատարելապէս գոհ լինել:

Թէ պատգամաւորները ժողովը և թէ ֆրանսիական մամուլը չափազանց վրդովված են Ալֆրիդի մէջ կատարվող անցքերի պատճառով: Լրագիրները նկարագրում են աւազակապետ Բուսմեմի անդթութիւնները, որ իր աւազակներով գերի տարաւ անապատը հարիւրաւոր ֆրանսիական և սպանիական ընտանիքներ, որպէս զի ֆրանսիական կառավարութիւնը մեծ գումար վճարէ նրանց յետգնելու համար: Ալֆրիդի բոլոր պատգամաւորները մի հարց ստորագրեցին, որ շուտով կը ներկայացնուի կառավարութեանը: Այդ հարցը չափազանց խիստ է և յարձակվում է Ալֆրիդի նահանգապետ, հանրապետութեան նախագահի եղբայր Ալբերտ Գրեվի վրա: «Voletaire» և «Temps» լրագիրները ստորագրութիւն են բացել Ալֆրիդի դէմ: Վաճառվածները օգտին Ասում են, որ Բուսմեմ չէ հեռացել Ալֆրիդից և նոր յարձակումն է պատրաստում: Բուսմեմ 300—400 սպանիացի գերիներ է վերցրել:

Տունիսից հաղորդում են, որ նրա հարաւային մասում մեծ շարժում է նկատվում: Բուսմեմի համարձակ յարձակումները և ֆրանսիական զօրքերի անմեկնելի դանդաղութիւնը բարձրացրին տեղացիների պատերազմական ոգին և վնասում են Ֆրանսիայի հեղինակութեանը:

Ֆրանսիայի ներկայացուցիչը Կ. Պոլսի մէջ սուլթանից չը ստացաւ հրաժարական ընդունելութիւն: Երեկ նա Կ. Պոլսի չի վերադառնալ մինչև Բ. Գուռը չը փոխի իր բռնած ընթացքը Տունիսի վերաբերութեամբ:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՒՄԵՅՑ

Վան, 25 մայիս

Տաւս ինչ օրից աւելի էր որ Վանի հայ ժողովուրդը կը յուզուէր մի բանի համար, կամ թէ

սապէս ասեմք 15 օրից աւելի էր որ Վանի մէջ մի օրուայ խնդիր յարուցած էր. այն էր ազգային սահմանադրութեան իմ տարեդարձը տօնելու կամ չը տօնելու խնդիրը:

Թիւրքիոյ կառավարութիւն մօտերս լսարաններ, խօսարաններ, և թաղային հաւաքումներ արգելած և այս մասին մի խիստ հրամանագիր մը ուղղած էր տեղույս ազգային առաջնորդականին, առաջնորդարանն ալ սոյն հրամանը հաղորդեց ամբողջ Վանի հայ ժողովրդեան. դարձանալին սա է որ մինչդեռ մենք ամենքս թէ հայ և թէ թուրք, հաւատարապէս օսմանցի պիտի նկատուինք տէրութեան հաղար անգամ կրկնած իր ազդեցութեամբ, բայց և այնպէս այսպիսի արգելումներ միայն հայ ժողովրդի համար կը լինին:

Ինչ և է մօռնանք սա կէտը խնդիրէն չը զեւելու համար. կառավարութիւնն արգելած էր ըսինք ժողովրդական գումարումներն առանց պատճառ մը ցոյց տալու: Վանի ժողովուրդը այս արգելքը լսածին հետեւեալ օրը Արարքի վարժարան գումարունցաւ Հայաստանի Սովետը Կնդրունական յանձնաժողովին և նորա մասնաժողովներուն, որք կը գտնուէին զանազան քաղաքներում և ամբողջ անոնց որք նպատակէին Վասպուրականի ժողովուրդը անցեալ տարին երբ առնելի սովէն ազատելով զայն, չնորսակալութեան և երախտագրութեան ցոյցեր արին. 2000-ի չափ բազմութիւն մը լեցուցած էր հան. ժողովուրդը խիստ զգածուած էր, շատերն կարտասուէին մտաբերելով սովից իրենց քաջածնողութիւններն և օրհնելով այն բարեբաղան անուններն, որք կեանք տուին իրեն վերստին. հանդէսը տեղի իւր 2 ժամ և ժողովուրդը ցրուեցաւ տանելով իր հետ անմուտք յիշատակ մը: Հայրենասէր Սանուր ընկերութիւնն Ազգ. Սահմանադրութեան իմ տարեդարձը տօնել իր վրայ առած լինելով, 7 անձէ բաղկացեալ մի կարգադիր մասնաժողով ընտրած էր հանդիսի շքեղութեան համար պէտք եղած կարգադրութիւններ անելու: Հանդէսը կատարվեցաւ. Յան. կոյսներ եկեղեցւոյ շէնքիցմանաւոր: Հանդիսէն դուրսացաւ հատկապէս պիտի արուէր Հայրենասէր ընկերութեան շէնքիցման վարժարանին, մուտքի և ճաշկերպի թիւ տոմարներն պատրաստված էին. մուտքի տոմարն ունեցող իրաւունքը կունենար հանդիսավայր մտնելով հանդիսին ներկայ գտնուելու և ճաշին մասնակցելու իրաւունքը կունենային:

Թէ տեղական կառավարութեան և թէ Վանի առաջնորդական փոխանորդ Բ. Գարեգին Արք. ունեւորեցին քանիցս ազգաբարձրութիւններ և դան. կարգադիր մասնաժողովին թէ արգելուած են ժողովրդական հաւաքումներն և ազգային հանդէսներ, բայց կարգադիր ժողով այդ ազգաբարձրութիւններ լսելով հանդերձ օրոշեց տօնել օսմանեան տէրութեան հայոց ազգին չնորած սահմանադրութեան իմ տարեդարձը: հանդէսը, ամեն տեսակ կարգադրութիւններ եղան մինչև մայիս 24-ի առաւօտ, ճիշդ այն պահուն որ ժողովուրդը քաղաքի թաղերէն Գնդըշի հայկազանի դպրոցը համախմբուած և դրօշակներ բացած յատուկ պատրաստուած նուագաձուներու և երգչաց խումբի մը երգեցողութեամբ դէպի Յանկոյսնի կերթար, ուր էր հանդիսավայրն, տեղական կառավարութիւնը զօրաց փաշան, քաղաքի ընդհանուր դատախազ Ալիմ պէյ և եղեւնադատ ատենին նախագահ Բեռք պէյ 100 հատ զօրքով կազմակի արապութեամբ Յանկոյսնի խրված էր հան խմբած հայ ժողովուրդը ցրուելու և հանդէսը տօնողներն պարագլուխներուն ձերբակալելու համար. յիշեալ պէյեր և փաշան կարգադիր մասնաժողովին քանի մ'անդամներ կանչելով կուսակալին հրամանը հաղորդեցին անոնց, ասոնք ալ պատասխանեցին թէ Վանը չենք որ կը տօնեմք Սահմանադրութիւնը, այլ ժողովուրդն է, ձեր հրամանը կարող էք հաղորդել ժողովրդեան: Հաղար ու մէկ ըստպատմութեան արին, խնդրեցին, աղաչեցին, պաղատեցին վերադառնալ զնորոգեցաւ նոյա խնդրքը, և ժողովուրդը յաջողեցաւ տօնել սահմանադրութեան իմ տարեդարձը: հանդէսը հալուածակ տեղական կառավարութեան կամաց: Հանդէսը սկսեց ժամ 3-ին, և հայոց Միացեալ ընկերութեանց վարժապետանոցի աշակերտներն մի քանիսը իրենց մարմնամարզի ուսուցիչ պ. Կարապետ Գրիգորյանի արին, խնդրեցին, աղաչեցին, պաղատեցին վերադառնալ զնորոգեցաւ նոյա խնդրքը, և ժողովուրդը յաջողեցաւ տօնել սահմանադրութեան իմ տարեդարձը: հանդէսը հալուածակ տեղական կառավարութեան կամաց: Հանդէսը սկսեց ժամ 3-ին, և հայոց Միացեալ ընկերութեանց վարժապետանոցի աշակերտներն մի քանիսը իրենց մարմնամարզի ուսուցիչ պ. Կարապետ Գրիգորյանի արին, խնդրեցին, աղաչեցին, պաղատեցին վերադառնալ զնորոգեցաւ նոյա խնդրքը, և ժողովուրդը յաջողեցաւ տօնել սահմանադրութեան իմ տարեդարձը:

պ. Գրիգորյանի ուսում առած է Ռուսաստանում և Վանի դիւցազն եղած է քանի մ'ամսէ ի վեր:

Ձիւղարժութիւնը տեղի 2 1/2 ժամ, որմէ յետոյ ճաշկերպը տեղի ունեցաւ եկեղեցւոյ բակին մէջ և 200-ից աւելի մարդիկ ճաշեցին, որոնցմէ 100 անձ միայն ճաշկերպի տոմսակ ունէին, իսկ մնացած հարիւրն ժողովուրդը ցրուելու եկող զօրքերն էին, որք ձրի հաց տեսնելով աճապարեցին առիթից օգուտ քաղել. ճաշկերպը կարելի եղածին չափ շքեղ և վազելու անելու համար կարգադիր մասնաժողով ոչ մի ջանք խնայած չէր: Հաւը սկսեց ժամ 6-ին և տեղի մինչև ժամ 8, (ալաթ ուրքա), որից յետոյ ժողովուրդը հանդիսավայր գնաց. հանդիսականներն կանգնէին կամարի մը տակէն որ դարձարուած էր գոյնզգոյն ծաղիկներով, և կամարի երկու կողմերն նստած էին զոյգ մը աղջիկներ, որք ծաղիկներ կը սփռէին կամարին տակէն անցնող հանդիսականաց վրայ: Ատենախօսից բեմն ալ նմանապէս դարձարուած էր գոյնզգոյն ծաղիկներով և պատկերներով. հանդէսը տեղի 2 ժամ, և առնախօսեցին քաղաքին նշանաւոր ուսումնականներէն մի քանիսը: Կարգադրած ճառերն կառավարութեան խնդրանք յանձնուեցան նմա, տոնուելու համար թէ անոնց մէջ կառավարութեան զաչկիւր կէտեր կային թէ ոչ:

Հանդէսը գոյնզգոյն վերջ տեղական պարեր ներկայացուցան, որ տեղի 2 ժամ, հուսկ ուրեմն ժողովուրդը հանդիսավայրէն մեկնեցաւ և գնաց ուղղակի Խրիմեան հայրիկի տան առջև երգեր երգեց, և իւր սիրելի և պաշտելի հայրիկին համար բարեմաղթութիւններ արեց, «կեցցէ» ներ գոռաւով: Ասիկց ալ ժողովուրդը մեկնեցաւ և գնաց ուսումնական և անդլական հիւպատոսարանաց առջև նա նոյն ցոյցերն արեց: Այս հանդիսին ներկայ էին ուսումնական փոխ-հիւպատոս պ. Կամաւարական և Անդլիոյ փոխ-հիւպատոս պ. Էմիլիոս Կլէյքըն (պարսից դեսպանն ալ թէն հրաւիրուած էր, բայց եկած չէր) և որիչ շատ մը նշանաւոր անձինք. հանդիսականներ 8000-ից աւելի էին թէ այր և թէ կին:

Ահա այսպէս վերջացաւ այս հանդէսը, որոյ տեղի չունենալուն համար աշխատեցան թէ տեղական կառավարութիւն, թէ հայր Գարեգին Սրուանձտեանց և թէ որիչ շատ մը անխոհեմ խոհմներ (!)

Վանի հայ ժողովուրդը չը պիտի մոռնայ երբեք 81-ի մայիս 24-ը, զի այն օր չէ թէ միայն Ազգ. սահմանադրութեան տարեդարձը տօնեց, այլ մի քաջ արեց նա իր իրաւունքներ պաշտպանելու մեծ գործի մէջ:

Բաղէշն գրուած նամակ մը կիմանամ որ մայիս 18-ին հան մեծ երկրաշարժ մը եղած է, անանկ որ Բաղէշն 8 ժամ հեռու գտնուող թեղուտ ամուսն գիւղ բոլորովին հիմնադատակ եղած է, փլած տուներու մէջ 95 անձինք մեռած և 34 վիրաւորվածներ գտնուած են ցարդ. սոյն գետնաշարժի ցնցումը Բաղէշն ալ զրգրած է թէն, բայց վնաս չէ պատահեց: Վանի մէջ նա նոյն օր և հետեւեալ օր զրգուցեցան ցնցումներ, բայց ոչինչ չը պատահեցաւ: Անդլական դեսպան պ. Կլէյքըն, քանի մ'օրն ի վեր թեղուտ գնացած է, իրաց վիճակը քննելու համար:

Վանցի

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 26 յունիսի: Պաշտօնական: Կովկասեան շրջանի շտաբի մէջ ծառայող Բուստուրլին նշանակված է կովկասեան առաջին զինվորային շտաբի գլխաւորի պաշտօնակատար: Աֆրիգիլի ըշանակված է փոխ-գլխաւոր անտեսական բաժնի ներքին գործերի մինիստրութեան: Վօյկով նշանակված է մինիստրի կանցլիարիցի կառավարիչ: «Голос» հաղորդում է որ Բուստուրլին Վլադիկովկասեան երկվթեղուտ խորտակման ժամանակ, Ստեփանյա կայաւորանի վրա, վեց վազմներ կատարելապէս փշրվեցան, ինն մարդ սպանվեցան, տասն և չորս ծանր վիրաւորվեցան և բազմաթիւ ճանապարհորդները թիւթե կերպով վիրաւորվեցան:

ԿՐՕՆԵՏԱՎ, 25 յունիսի: Հաշի ժամանակ որ արվեցաւ Կրօնաւորդի նաւատորմի ներկայացուցիչներից ի պատիւ անգլիական նաւատորմի, որի առաջնորդն է պրինց Էդինբուրգեան, ներկայ էին Մեծ Իշխան Ալէքսանդրովիչ, Կազակովիչ, Պեշտուրով

և Բուստուրլին եղբոր հետ: Հաւեր չարտասանվեցան, եթ ժոտտ առաջարկվեցան ուսերէն և անգլիերեն լեզուով վիկտորիա թաղուհու, Թագաւոր կայսրի կենացը, անգլիական և ուսաց նաւատորմի ծաղիման, Էդինբուրգեան հերցոգի և հերցոգուհու և Ալէքսէյ Ալէքսանդրովիչի կենացը: Հաշիւը լրջի մէջ կային 149 հոգի:

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎ, 25 յունիսի: Ապստամբված արաբների պետ Բուսմեմ, զիմեց Մորոկկոյի սուլթանին, հրաւիրելով նրան Աֆրիկայի շարժման առաջնորդութիւնը յանձն առնել, որովհետեւ նա յայտնված է հիւսիսային Աֆրիկայի խալիֆ:

ՊԱՐԻՋ, 25 յունիսի: Ալֆրիդի նահանգապետ Ալբերտ Գրեվի տեղ կը նշանակվի Լէզոն րընո:

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի: Գերմանական դեսպան Կ. Պոլսի մէջ կը նշանակվի Կոմս Հաց-Ֆելդի տեղ, Փոն-Բադօլից:

ԲՈՒԿԱ, 25 յունիսի: Սկուտարից հաղորդում են որ Թիւրքաց կառավարութիւնը պահանջում է տեղական ժողովրդից երկու տարուայ համար հարկերի կանխիկ վճարելը, մինչև որ ազգաբնակչութիւնը կը սկսի մասնակցել պետական պարտքերի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 յունիսի: Պաշտօնական հաղորդում են, Ներքին գործերի մինիստրը որոշեց արդիւի «МОСКОВІЙ Телеграф» լրագրի հատուկ ծախվել: «Голос» լրագրին հաղորդում են Կրօնաւորդից, յունիսի 27-ին հեռացաւ անգլիական պահեստի նաւատորմը: Նրան այցիւրեցին Թագաւորը, Թագուհին և Կայսերական տան Անդամները:

ՍԻՍՏՈՎՈ, 26 յունիսի: Երէկ հասաւ այստեղ զենեկաւ Երբոտ: Երեւոյ կը հասնին Աւստրիայի և Գերմանիայի զիպոմանտիական զործակաւորները: Տիրնովի մէջ ընտրված է այստեղ հասած Յանկով, Սլավէյով և Կարապիլով պատգամաւորները մտադիր չեն մասնակցել ազգային ժողովի նիստերին: Ընտրված բոլոր պատգամաւորները 328 մարդ են, բացի չորսից զրանք բոլորն էլ պատկանում են պահպանողական կուսակցութեանը: Այսօր հասաւ այստեղ բոլորական եղբարեկցութիւնը:

Կ. ՊՈԼԻՍ, 27 յունիսի: Շէյխ-ուլ-Իսլամ յայտնեց, որ Շարիաթի հիման վրա խալիֆի սպանողները պէտք է միայն սրով մահուան պատժի ենթարկվին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 27 յունիսի: Պաշտօնական հաղորդում են, Ծովային ուսումնարանական հիմնարկութիւններն անսահման խախտեց Զեյթսոյ հիւանդութեան պատճառով արձակված է իր պաշտօնից, մնալով Ծովային գլխաւոր դատարանի անդամ: Տպագրական գործերի վարչութեան խորհուրդի անդամ Վեյսթոյ նշանակված է Կայսերական բաժնիների գլխաւոր և ծովային ուսումնարանների մասնաժողովի նախագահ: «Голос» լրագիրը հաղորդում է, Թագաւորը և Թագուհին ընդունեցին Պորտուգալիայի արտաքին կարգի դեսպան և լիազօր մինիստրին, որ նրանց համար և Թագաւորանիցի համար բերել է պորտուգալական շքանշաններ:

ԼՕՆԿՈՆ, 26 յունիսի: Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ զիլաւ որ դատարանը հաստատեց առաջին դատարանի վճիռը Միտհաթ-փաշայի և մեւների գործի վերաբերութեամբ:

ՏՈՒՆԻՍ, 26 յունիսի: Ներքին նահանգների մէջ ապստամբութիւններ են սկսված: Զօրքեր են ուղարկված ապստամբների դէմ, որոնց թիւը հետզհետէ պակասում է, որովհետեւ նրանցից շատերն անցնում են իշնամու կողմը:

Կ. ՊՈԼԻՍ, 26 յունիսի: Բ. Գուռը վրձնել է դարձեալ չորս բառային ուղարկել Պրիդրինդ և Պեկա, որովհետեւ պրեանական միւլեան գօրքերը սպառնող զիւրք են բռնել:

ՀԻՌՍ, 26 յունիսի: Աւստրիայի ցանկութեան համեմատ խաղաղական կուսակցութիւնը վճռեց վերադարձնել նկատվող նախկին թագաւորին նրա հանգուցեալ մօր կայքերը, որոնք նրանից խլված էին:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԲՐՈՒՆԻ

